նաւութիւնը նրանից է: Մենք տեսանք, որ գրքերը փչանում են, այդ պատճառով պիտանիները ջոկեցինք դրանց միջից եւ մի ապահով տեղում ենք պահում:

— Ձեր ջոկածները անպատճառ սուրբ գրքեր կը լինէին:

— Ի հարկէ, սուրբ գրքեր:

— Իսկ այդ անսուրբ գրքերը թողեցիք, որ այստեղ փտե՞ն...

Նա ոչինչ չպատասխանեց, երեւի իր մտքում զարմանում էր պարոն բժշկապետի անտեղի բարկութեան մասին: Ես օգնեցի Ասլանին՝ քննելու գրքերը: Վանահայրը, մոմը ձեռքին, տհաճութեամբ լուսաւորում էր մեր աշխատութիւնը: Որո՞նք էին, հայր սուրբի կարծիքով, անսուրբ գրքերը, — յայտնոեցան Խորենացու, Ղազար Փարպեցու, Եղիշէի, Դաւիթ Անյաղթի եւ մեր նշանաւոր մատենագիրների ընտիր օրինակները, բայց բոլորը քրքրոած, բոլորը կիսով չափ կամ մեծ մասամբ փտած: Մի Խորենացի միայն մնացել էր ամբողջ, բայց նրանից եւս առաջին եւ վերջին թերթերը պակաս էին:

— Բժշկարան կա՞յ, — հարցրեց վանահայրը:

— Չէ երեւում, — պատասխանեց Ասլանը:

— Մի հատ պէտք է որ լինէր, — ասաց հայր սուրբը, աշխատելով մտաբերել, — բայց չեմ յիշում ով տարաւ...

— Ով տարել է, վատ չի արել, եթէ մնացած լինէր, այն եւս պէտքէ այդ գրքերի վիճակին ենթարկուէր, — ասաց Ասլանը:

Խորին ցաւակցութեամբ մենք դուրս եկանք խորանից, ուր կատարուել էր այդ բարբարոսութեանը: Վանայ ծովակի կղզիները, ապահով տեղեր համարուելով, նրանց մէջ գտնուած անապատները միշտ եղել են հայոց գրքերի մի-մի շտեմարաններ. իսկ այդ շտեմարանները տգէտ աբեղաների անհոգութիւնից դարձել են նոյն գրքերի գերեզմանները...

— Հիմա, հայր սուրբ, խնդրեմ ցոյց տուեցէք ձեր սուրբ գրքերը, — ասաց Ասլանը: — Անսուրբները տեսանք...

Վանահայրը շփոթած կերպով կանգ առաւ եւ մտատանջութեան մէջ ընկաւ: Ասլանը, երեւի, հասկացաւ նրա անվճռականութեան պատճառը եւ հանգստացրեց՝ ասելով.

— Ես միայն հեռուից կնայեմ...

-Աստուած օրհնէ քո հաւատը, — ասաց հայր սուրբը եւ կակազելով աւելացրեց, — ի հարկէ, պարոն բժշկապետ, աշխարհական մարդուն փոքր-ինչ ան...